



ՎԻՋՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 27-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում տաղանդավոր գրող Վիլյամ Սարոյանը, ուր հայրենիքում էր

գտնվում Սիյուրքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և Հայաստանի գրողների միության հրավերով:



Հայոց Հայրապետը մեծ գրողին նվիրում է բյուրեղապակյա բաժակ՝ քանդակված Մայր տաճարի պատկերով

Մեծանուն գրողին ընկերակցում էր բանաստեղծ Վահագն Դավթյանը:

Սրտառույշ ու ջերմ էր մեծ գրողի երկրորդ հանդիպումը Հայոց Հայրապետի հետ Վեհաբանում:

Առաջին անգամ 1960 թվականին Վիլյամ Սարոյանը Հայոց Հայրապետին հանդիպել էր Վիեննայում:

Այս երկրորդ հանդիպման առթիվ Վեհափառ Հայրապետի և մեծ հոգու ու սրտի տեր գրողի միջև տեղի է ունենում ջերմ ու երկար գրույց՝ հին բարեկամների մտերմությամբ, գրույց, որին ներկա են լինում նաև Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը և ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը:

Ապա Վիլյամ Սարոյանն այցելում է Նոր Վեհաբան, Վեհաբանի պատկերասրահ, որտեղ դիտում է, մեծ ոգևորությամբ և ուշադրությամբ, հայ արվեստի տարբեր բնագավառներին պատկանող ընտիր նմուշներ՝

իր տպավորություններն արտահայտելով ասեն քայլում «հիանալի է», «զարմանալի է» խանդավառ պոռթկումներով:

Մեծանուն գրողն այցելում է Մայր տաճար և նրան առընթեր եկեղեցական արվեստի թանգարան:

Հայոց Հայրապետին և Մայր Աթոռին հրաժեշտ տալուց առաջ Վեհաբանում, հյուրերի ոսկե մատյանում, Վիլյամ Սարոյանը թողնում է հետևյալ արձանագրությունը.

«Սուրբ Էջմիածինը հայ հոգու կենտրոնն է, սիրալը և ամբողջականությունը: Այստեղ գտնվելը հոգեկան մեծ փորձառություն է և ներքին զորացման ու անխորտակելիության մի մեծ լուսավորում այս անցավոր և խոցելի մարդկային աշխարհում: Այն միաժամանակ խոնարհության և հպարտության մի պահ է ինձ՝ այցելուիս համար:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

Հոկտեմբեր 27 1976 թ. »:

